ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 12, 1965 Общественные науки

Ա. Ս. Համբարյան

ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Արհեստներն առաջացել են մարդկային հասարակության վաղ ժամանակաշրջանում և հանդիսացել մինչկապիտալիստական արդյունաբերության բնորոշ ձեր։ Դրանք տարբերվում են նահապետական գյուղացիական տնային արդյունաբերությունից. եթե տնային արդյունաբերությունը հանդիսանում է արդյունաբերության սաղմնային ձեր, ապա արհեստները՝ նրա ավարտուն, առաջին ձեր։ Արհեստավորները նահապետական գյուղացիների համեմատությամբ ավելի քիչ են զբաղվում երկրագործությամբ։ Նրանց համար երկրագործությունն ունի համարյա այնպիսի նշանակություն, ինչպիսի նշանակություն ունի նահապետական գյուղացիների համար տնային արդյունաբերությունը։ Վ. Ի. Լենինը մատնանշում է, որ տնային արդյունաբերությունը որպես ինքնուրույն պրոֆեսիա «...դեռ գոյություն չունի. արհեստագործությունն այստեղ անխզելիորեն կապված է հողագործության հետ՝ իբրև մեկ ամբողջություն։ Նահապետական հողագործությունից կտրվող արդյունաբերության առաջին ձեն արհեստն է, այսինքն շինվածքների արտադրությունը՝ սպառողի պատվերի համաձայն»[1]։

Արհեստավորները, մյուս կողմից, տարբերվում են մանր ապրանքարտադրողներից իրենց ավելի ամուր կապով հողի հետ։ «Մանր ապրանքարտադրողների հետ համեմատած,—գրում է Վ. Ի. Լենինը,—արհեստավորներն աչքի են ընկնում հողի հետ ամենից ուժեղ կապվածությամբ»[2]։ Եթե արհեստավորներն արտադրում են գլխավորապես պատվիրատուի համար, աշխատելով կամ իրենց կրպակներում, կամ շրջելով տնից-տուն, գյուղից-գյուղ, ապա մանր ապրանքարտադրողները արտադրում են շուկայի համար, վաճառելով իրենց շինվածքներն ու գործվածքները կամ անմիջապես սպառողին, կամ գնորդ առևտրականին։

Որոշ պատմաբաններ ու տնտեսագետներ հաճախ նույնացնում են արհեստավորներին մանր ապրանքարտադրողների հետ։ Մինչդեռ արդյունաբերության զարգացման և ապրանքա-կապիտալիստական տնտեսության առաջացման ուսումնասիրության տեսակետից նրանց միմյանցից տարբերելը խիստ անհրաժեշտ է։ Վ. Ի. Լենինը ցույց է տալիս. «...պետք է խստորեն տարբերել շուկայի համար աշխատող ապրանք արտադրողներին... սպառողների համար աշխատող արհեստավորներից..., որովհետև արդյունաբերության այդ ձևերը իրենց հասարակական-տնտեսական նշանակությամբ միանգամայն տարբեր տիպեր են»[3]։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 415։
2 Նույն տեղում, էջ 417։
3 Նույն տեղում. հատ. 2, էջ 454։

Արհեստները հանդիսանալով ստրկատիրական ու ֆեոդալական հասարակարգերի արդյունաբերության բնորոշ ձևը, շարունակում են գոյատևել նաև կապիտալիզմի պայմաններում։ Նրանք ամուր են պահպանվում հատկապես այն երկրներում, որտեղ դեռ չեն թափանցել, կամ քիչ են թափանցել ապրանքա-կապիտալիստական հարաբերությունները։ Այդպիսի երկրներից էր Թուրքիան։

XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբին Թուրքական կայսրության եվրոպական շրջանները թեև արդեն ներգրավվել էին կապիտալիստական զարգացման մեջ, բայց նրա արևելյան մասերը, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանը, շարունակում էր ապրել հիմնականում միջնադարյան ու անգամ նահապետական կարգերով։

Արևմտյան Հայաստանի քաղաքային բնակչությունը բաղկացած էր գերազանցապես արհեստավորներից (դարբիններ, երկաթագործներ, պղնձագործներ, արծաթագործներ, ոսկերիչներ, ատաղձագործներ, կոշկակարներ, դերձակներ, շալագործներ, որմնադիրներ և ուրիշներ), որոնց մեջ գերակշռողը հայերն էին[4]։ 1883 թ. Գ. Շերենցն արձանագրել է. «Կարինում, Վանում, Բաղեշում, Տիգրանակերտում, Խարբերդում և Փոքր Հայքի երևելի քաղաքներում առևտրական և արվեստի հրապարակներում գործողների մեծամասնությունը հայ ամբոխն է»[5]։

Արհեստավորների զգալի մասը համախմբված էր էսնաֆություններում, որոնք ըստ էության նույնն էին Արևմտյան Հայաստանում, ինչ համքարությունները Արևելյան Հայաստանում։ Էսնաֆությունների մեջ համախմբվում էին սովորաբար միատեսակ արհեստի ներկայացուցիչներ (ոսկերիչներ, արծաթագործներ, թիթեղագործներ և այլն)։

Բայց երբեմն էսնաֆությունների մեջ համախմբվում էին ոչ թե միատեսակ, այլ միասեռ ու փոքրաթիվ արհեստներով զբաղվածները (օրինակ՝ Էրզրումում կոշկակարները և չմշկակարները կազմում էին մի էսնաֆություն, որմնադիրներն ու քարտաշները՝ այլ էսնաֆություն և այլն)։ Էսնաֆություններն ունեին իրենց մշտական տեղերը։ Քաղաքի թաղամասերը հաճախ կոչվում էին նրանց անուններով։ Էսնաֆական արհեստանոցներում սովորաբար աշխատում էին 3 հոգի՝ վարպետը կամ ուստան, վարպետացուն կամ քարգահը և աշակերտը։ Սակայն հաճախ էր պատահում, որ այնտեղ աշխատում էր միայն վարպետը, կամ վարպետն ու վարպետացուն, վարպետն ու աշակերտը։ Ս. Եղիազարովը, որն իր ուսումնասիրությունը կատարել է Անդրկովկասի ու Արևմտյան Հայաստանի նյութերի հիման վրա, գրում էր, ինչպես Անդրկովկասի նույնպես և փոքր Ասիայի քաղաքներում «...Կային այնպիսի կորպորացիաներ, որտեղ վարպետը պահում էր ոչ ավել, քան մեկ վարպետացու և մեկ աշակերտ։ Քիչ չէին նաև այն արհեստավորները, որոնք մենակ էին աշխատում, առանց աշակերտների, վարպետացուների ու աշխատողների»[6]։

---

[4] Արևմտյան Հայաստանի արհեստների մասին XIX դարում ուշագրավ նկատումներ ունի պրոֆ. Վ. Ա. Պարսամյանը (տե՛ս, Վ. Պարսամյան, Հայ ժողովրդի պատմություն, Հայաստանը 19-րդ դարի առաջին կեսին, գրակ 7, էջ 162—169)։

[5] «Մշակ», 1883, № 115։

[6] С. А. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказье. Часть II, Городские цехи, организация и внутреннее управление закавказских амкарств. Казань, 1891, стр 13

Յուրաքանչյուր էսնաֆություն ուներ իր ղեկավարը, որը կոչվում էր ուստաբաշի, իսկ սա՝ իր տեղակալները, որոնք կոչվում էին աղսախկալներ։ Դրանց հետ միասին էսնաֆությունն ուներ նաև գանձապահ կամ խազնադար և ցրիչ կամ իգիթբաշի, որոնք ընտրվում էին վարպետների ընդհանուր ժողովում՝ ուստաբաշին ու նրա տեղակալները սովորաբար հարուստ և աղդեցիկ մարդկանցից, իսկ խազնադարներն ու իգիթբաշիները՝ աշխատունակությունը կորցրած արհեստավորներից։

Ուստաբաշին աղսախկալների հետ միասին գնում էր հումք, որոշում կամ սահմանում ապրանքների գները, վարձում արհեստանոցներ կամ կրպակներ, թույլ էր տալիս բացելու նոր արհեստանոցներ, սահմանում վարպետի, վարպետացուների ու աշակերտների թիվը, բաժանում հարկերն ու տուրքերը, հավաքում դրանք, հետևում արհեստավորների վարքին, կարգավորում նրանց դրամական միջոցները, հսկում շինվածքների կամ գործվածքների որակին, ընդունում բողոքներ, լուծում դրանք և այլն։ Գանձապահը պահում էր էսնաֆության դրամական միջոցները, իսկ իգիթբաշին կատարում էր ուստաբաշու կամ աղսախկալների բազմաթիվ հրամաններն ու կարգադրությունները։

Յուրաքանչյուր էսնաֆություն ուներ իր դատարանը, որի մեջ մտնում էին ուստաբաշին ու աղսախկալները։ Ընթացիկ հարցերը ուստաբաշին անձամբ էր վճռում, իսկ բարդ ու կարևոր նշանակություն ունեցող հարցերի լուծման համար հրավիրում էր դատական նիստ, որին մասնակցում էին փորձված և հմուտ վարպետները։ Դատարանը սովորաբար քննում և լուծում էր արհեստավորների միջև եղած վեճերը, նրանց անձնական կամ ընտանեկան խնդիրները, կրոնական հարցերը և այլն։ Դատարանից դժգոհ մնացողները կարող էին դիմել շեխուստասուն, որը, ըստ Խ. Մարնակոզյանի վկայության, «մի աստիճան պաշտոնով բարձր էր ուստաբաշուց»[1]։ Նրանք կարող էին դիմել նաև շեխսահապին, որը հանդիսանում էր քաղաքի բոլոր արհեստավորների ղեկավարը։ Նրանք, ի վերջո, կարող էին դիմել նաև քաղաքային պաշտոնական դատարանին։ Սակայն արհեստավորները սովորաբար իրենց վեճերը լուծում էին աղսախկալների կամ ուստաբաշու միջոցով և շատ հազվագյուտ դեպքերում էին դիմում դրանցից բարձր կանգնած անձանց կամ քաղաքային դատարաններին։

Ուստաբաշին արհեստավորներին ենթարկում էր զանազան պատժի՝ տուգանում էր, ստիպում կազմակերպել խնջույք, վատորակ ապրանքները մեխում էր նրա արհեստանոցի դռանը, փակում էր արհեստանոցը, զրկում էր աշակերտ կամ վարպետացու պահելու իրավունքից, ծեծում էր, արտաքսում էսնաֆությունից և այլն։

Ճիշտ է, ուստաբաշու գործունեությունը ենթակա էր էսնաֆական ընդհանուր ժողովի քննարկմանն ու հաստատմանը, բայց դա սովորաբար ուներ ձևական նշանակություն։ Ուստաբաշին շատ հաճախ կենսագործում էր իր որոշումները առանց արհեստավորների գիտության։

Էսնաֆական կազմակերպությունները, ինչպես այլ երկրներում, նույնպես և Արևմտյան Հայաստանում դասային կազմակերպություններ էին, որտեղ շեխսհապին, շեխուստասին, ուստաբաշին ու վարպետը շահագործում էին վարպետացուներին ու աշակերտներին։ Նրանք վարպետացուին վճարում էին շնչին դումար, որը հազիվ էր բավարարում, իսկ հաճախ նույնիսկ չէր բավարարում

---

1 «Մշակ», 1891, № 65։

նրա կենսապահանջները։ Այսպես, Թղթակից Շավարշը 1868 թվականին գրում էր, որ Էրզրումում արհեստավորները «ամենայն ճիգ ի գործ գրած՝ հազիվհազ օրական պարեն մը կրնան հայթհայթել»[8]։ Իսկ Խ. Ֆ. Բ. Լինչը 1890-ական թվականներին հիշատակում է, որ Էրզրումում հյուսնի և այլ արհեստավորների օրական աշխատավարձը լավագույն դեպքում կազմում է 8 ղուրուշ[9]։

Արհեստավորական վերնախավը, վճարելով շնչին աշխատավարձ, միաժամանակ ստիպում էր վարպետացուներին զանազան առիթներով տալ նվերներ։ Վերջիններս տալիս էին այդ նվերները շատ հաճախ դրամով։ Էրզրումում շեխուստասին և ուստաբաշին «ընծաներ էին ստանում նոր խալիֆաներից, ուստաներից, մեղապարտներից. նմանապես նշանավոր տոներին էսնաֆը շնորհավորության միջոցին դատարկաձեռն չէր ներկայանում նրանց»[10]։

Վարպետը աշակերտ ընդունելիս անց էր կացնում փորձնական շրջան, որը տևում էր 6 շաբաթից մինչև 6 ամիս։ Այդ ժամանակամիջոցում նա ոչինչ չէր վճարում աշակերտին։ Ընդհակառակը, սովորեցնելու համար վերցնում էր նրանից 20 կոպեկից մինչև 2 ռուբլի։ Եթե վարպետը հավանում էր աշակերտին, ապա պահում էր, իսկ եթե ոչ՝ հեռացնում։ Ուսուցման ժամկետը շատ երկար էր՝ մինչև 10 տարի։ Վարպետն այդ ժամանակամիջոցում ոչ միայն չէր վճարում աշակերտին, այլև վերցնում էր նրանից նվերներ և պարտադրում իր տանը կատարել զանազան աշխատանքներ։ Խ. Մարնակոզյանը նշում էր, որ ընդհանրապես ուսուցումն ընթանում էր «խիստ ծեծով, կոպիտ բռնակալություններով»[11]։

Թուրքական կառավարությունն իր հարկային քաղաքականությամբ ավելի էր վատթարացնում արհեստավորի վիճակը. պահանջում էր վճարել ծխահարկ, գլխահարկ, եկամտահարկ, կալվածքի հարկ, ինչպես նաև կատարելու զանազան պարհակներ (ճանապարհների ու կամուրջների վերանորոգում, ջրանցքների բացում, բանակի կամ պաշտոնյաների համար զենքի ու հանդերձանքի պատրաստում և այլն)։ «Չկար արհեստ, որի ներկայացուցիչները չկատարեին պետության ղեկավարի օգտին այս կամ այն պարհակը»[12]։

Կառավարությունը հարկման համար որպես միավոր ճանաչում էր միայն էսնաֆությունը, իսկ ուստաբաշին և նրա տեղակալները բաժանում էին հարկերն ու պարհակները արհեստավորների միջև, հիմնական ծանրությունը գցելով վարպետացուների և աշակերտների վրա։

Թուրքական պաշտոնյաներն ու հարկահանները, չարաշահելով իրենց դիրքը, նույնպես պահանջում էին արհեստավորներից նվերներ։ Ս. Եղիազարովը նշում է. «Ամեն մի դաս, ամեն մի արհեստավորական կամ առևտրական ասոցիացիա մասնակցում էր տեսքով կամավոր, բայց էությամբ հարկադիր այդ նվիրատվություններին, որոնք ունեին տուրքերի բնույթ»[13]։

Թուրքական պաշտոնյաները, շահագործման հետ միասին, իրականացնելով իրենց պետության շովինիստական քաղաքականությունը, ձգտում էին նաև ազգամիջյան կռիվներ բորբոքել մահմեդական ու քրիստոնյա արհեստա-

---

8 «Մասիս», 1868, մայիսի 13։

9 Х. Ф. Б. Линч, Армения, т. II, стр. 278: 1 ղուրուշը=էր 5,5 կոպ.։

10 «Մշակ», 1891, № 66։

11 «Մշակ», 1888, № 136։

12 Ս. Եղիազարով, Նշված աշխատությունը, էջ 251։

13 Նույն տեղում, էջ 249։

վորների միջև։ Բայց այդ նրանց ոչ միշտ էր հաջողվում։ Հայ և թուրք արհեստավորները շատ հաճախ գտնվում էին բարի դրացիական հարաբերությունների մեջ։ Գ. Շերենցը գրում է՝ «Բաղեշցի, Խարբերդցի, Կարինցի վաճառական կամ արհեստավոր թուրքերը վատ հակակրություն չեն ունեցել դեպի իրենց հարևան քրիստոնյան, այլ հակառակ դեպքերում նոքա կարելին եղածի չափ պաշտպանել են զրկյալին»[14]։

Էսնաֆությունները ունեին մի շարք սկզբունքներ, որոնք խոչընդոտում էին կապիտալիստական հարաբերությունների առաջացմանն ու զարգացմանը։ Այսպես, արհեստավորները իրավունք չունեին հումք գնելու առանց ուստաբաշու գիտության կամ զբաղվելու այնպիսի գործերով, որոնք չէին կազմում նրանց նեղ մասնագիտությունը, իսկ վարպետները ու վաճառականները չէին կարող ազատ տնօրինել իրենց իրավասության տակ գտնված նյութական ու դրամական միջոցները։ Էսնաֆությունները արգելակում էին կոնկուրենցիայի զարգացումը։ Եթե նրանցից որևէ մեկը բարձրացնում էր իր արտադրանքի գները, ապա մյուս էսնաֆությունները խզում էին նրա հետ իրենց ունեցած գործնական կապերը, մեկուսացնում, ենթարկում տնտեսական ու բարոյական ճնշման և այդպիսով ստիպում վերադառնալ նորմալ գներին։ Էսնաֆությունները շատ ընդհանուր նմանություններ ունեին եվրոպական համքարությունների հետ, որոնց մասին Կ. Մարքսը գրում էր. «Համքարային օրենքները... խստիվ կերպով սահմանափակելով այն ենթավարպետների թիվը, որոնց աշխատանք տալու իրավունք ուներ մեկ վարպետը, դրանով էլ հենց պլանաչափորեն արգելք էին լինում համքարային վարպետների կապիտալիստ դառնալուն»[15]։

Սակայն էսնաֆությունները, արևմտա-եվրոպական համքարությունների համեմատությամբ, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում ունեին որոշ առանձնահատկություններ, որոնք նպաստում էին նրանց քայքայմանը։ Դրանցից կարելի է հիշատակել այն, որ Արևմտյան Հայաստանում վարպետը կարող էր ունենալ մեկ աշակերտից ավելի, արհեստավորը կարող էր աշխատանքից հետո իր տանը պատրաստել ապրանքներ և վաճառել։ 1907 թ. Խաչկունին գրում էր, որ Վանում այն արհեստավորները, որոնք տնտեսապես քիչթե շատ բարեկեցիկ են, «միաժամանակ վաճառականություն ընելին է պատճառը»[16]։

Էսնաֆությունների մեջ համախմբված արհեստավորների կողքին կային նաև թվով ոչ քիչ արհեստավորներ, որոնք ազատ գործունեության հնարավորություններ ունեին։ Ճիշտ է, էսնաֆությունները ձգտում էին վերցնել այդ արհեստավորներին իրենց կազմակերպությունների մեջ, սակայն նրանց ձգտումները հաջողությամբ չէին պսակվում։

Արևմտյան Հայաստանում արհեստները կենտրոնացված էին քաղաքներում, բայց դրանք տարածված էին նաև գյուղերում։ Այսպես, Էրզրումի վիլայեթի Կան գյուղում կային որմնադիրներ ու երկաթագործներ, Վանի վիլայեթի Սխկա, Մխկեր, Հնդստան, Առեզ, Ջգրաշեն, Արտամետ, Բերդակ և այլ գյուղերում՝ հյուսներ, ատաղձագործներ, կողովագործներ ու խսիրագործներ,

---

14 «Մշակ», 1883, № 115։

15 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 378։

16 «Մշակ», 1907, № 148։

Բիթլիսի վիլայեթի Փափշեն, Վանիկ, Ղուլթիկ և այլ գյուղերում՝ բրուտագործներ և այլն։

Արհեստավորները սովորաբար աշխատում էին իրենց գյուղերում և կատարում բնակիչների պատվերները։ Բայց երբեմն նրանք շրջում էին գյուղից-գյուղ, «ծառայության մեջ մտնում» կիսաքոչվոր ու քոչվոր քրդերի մոտ, թափառում նրանց հետ տեղից-տեղ և պատրաստում զենքեր, տնային կահույք և այլ առարկաներ ու կատարած աշխատանքի դիմաց վարձատրվում էին յուղով, պանրով, բրդով, ոչխարով, գառներով և անգամ եզներով ու կովերով։ Քրդերը վճարում էին հայ արհեստավորներին «այն մթերքներով, որոնք ստանում էին իրենց անասուններից»[17]։

Թե՛ քաղաքներում և թե՛ գյուղերում արհեստները տիրապետող տնտեսական ու քաղաքական պայմանների հետևանքով, գտնվում էին մասամբ հետամնաց վիճակում։ Այսպես. Շավարշը Էրզրումի արհեստավորների մասին գրում էր. «Ուր էր թե ասոնք ալ իրենց արհեստից մեջ առաջադեմ անձինք ըլլային. երկաթագործը կամ գարբինը նույն ուռը նույն սալին վրա նույն կերպով կծեծե, ինչպես Խորենացի ալեզարդ պատմաբանին ականջը ով գիտե որչափ միջոցի հեռավորությամբ հասած այն պառավական առասպելը մեր Արտավազդ թագավորին վրա պատմված, թե մինչև նույն օրերը դարբիններն ուռը ի սալի կզարնեին եղեր, որպեսզի Արտավազդա շղթաները կռանահարից ձայներեն ամրապնդեն. դեռ նույն ուռը և նույն սալը է և թերևս արհեստն ալ այն ժամանակի հասակին մեջ ոչ մեծցած և ոչ պզտիկցած, ամեն ոք իր վարպետեն ինչպես որ սորված է՝ զնույնը ի գործ կդնե. այստեղի մյուս բոլոր արհեստավորներն ալ բացի մեկ երկուքեն, եթե այսպես են ըսելու ըլլամ՝ չեմ սխալիր. Ագամա թոռանց հնարած ջուլհակությունն է, որ ցարդ տեղերս ի գործ կդրվի»[18]։

Բայց ընդհանուր առմամբ, արհեստի որոշ ճյուղերը Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում առաջադիմում ու կատարելագործվում էին։ Այսպես. Վանում զարգացավ ոսկերչությունը, հին վարպետների կողքին առաջ եկան նորերը, որոնք պատրաստում էին նոր ճաշակի առարկաներ՝ ծխախոտի տուփեր, բաժակներ, գդալներ, դանակներ, պատառաքաղներ և այլն։

Ոսկերչության հետ զուգընթաց զարգացավ նաև կահույքագործությունը։ Վարպետներն ընտիր ընկուզենուց պատրաստում էին գեղեցիկ սեղաններ, աթոռներ, թիկնաթոռներ, պահարաններ, արկղներ, մեծ ու փոքր տուփեր, պատկերների շրջանակներ և այլն։

Վանում զարգացավ նաև դերձակությունը։ 1880-ական թվականներից վարպետները սկսեցին աշխատել «Զինգեր» մեքենայով։ Շնորհիվ այդ հանգամանքի դերձակությունը, ինչպես նշում էր Մերուկը (Ա. Դարբինյանը), «օրեցօր թև առավ և սկսեց առաջ վազել, տարեցտարի «ֆռանգ թարզի»-ների (այսպես են կոչվում մեքենայով գործող վարպետները հներից զանազանելու համար— Ա. Հ.) թիվը շատանում է, և հագուստի ձևի մեջ նորանոր մոդաներ են մտնում»[19]։

Խարբերդում առաջադիմեց կոշկակարությունը։ Արհեստավորներն սկսեցին պատրաստել հարմար ու ճաշակով կոշիկներ, որոնց հագնողները բեգերն

17 Ռ ա ֆ ֆ ի, Երկեր, հ. 4, էջ 241, 242։
18 «Մասիս», 1868, մայիսի 13։
19 «Մուրճ», 1904, № 8, էջ 30։

ու աղաներն էին, կամ քաղաքի ու գյուղի հարուստ դրամատերերը։ Մ. Ճիզմեճյանն իր հուշերում գրում էր, որ Խարբերդում «...հարյուրեն ավելի խանութներ շորս կամ հինգ գործավորներով կը կարեին ոտքի կոշիկ-փոստալ, որ կտարածվեր նաև շրջանակները մեծ քանակությամբ։ Կային մի քանի կարմիր ու սև մուգ ճիզմե շինողներ։ Հայրս ալ՝ Գասպար, որակավոր արհեստավոր, կը կարեր մոյկը, մասնավորապես կարմիրը, կպատրաստեր մասնավորապես Տերսիմի քուրդ աղաներուն և անոնց զավակներուն համար։ Կային քանի մը արհեստավորներ ալ, որ կը կարեին դեղին չարըխ, գյուղացի հողագործներուն հատուկ։ Նույնպես կային ուրիշներ, որ կը կարեին փապուճ՝ տուներուն մեջ գործածելու, կիներուն համար»[20]։

Կոշկակարությունն առաջադիմեց նաև Բերրիում։ Արհեստավորներն այստեղ նույնպես պատրաստում էին տեղական և եվրոպական կոշիկներ։ Նրանք տեղականը պատրաստում էին հասարակ ժողովրդի, իսկ եվրոպականը՝ ունևոր խավի համար։ Բոլոր կոշկակարներն աշխատում էին իրենց նյութով՝ ըստ պատվիրատուների պահանջների. արհեստավորների և պատվիրատուների միջև չկար որևէ միջնորդ[21]։

Էրզրումում 1880-ական թվականներին զարգացավ պղնձագործությունը, ձուլագործությունը, ինչպես նաև կոշկակարությունը։ Վ. Փափազյանը նշում է, որ Տաճկաստանում չկա մի այլ քաղաք, որ արհեստավորները կարողանային պատրաստել այնպիսի լավ, թեթև և մաքուր պղնձեղեններ, զարդարուն պայուսակներ, գիմացկուն ու գեղեցիկ կոշիկներ, մանավանդ կրկնակոշիկներ, ինչպես Էրզրումում[22]։

XX դարի սկզբին Էրզրումում զարգացավ նաև դերձակությունը, զինագործությունը, երկաթագործությունը և արհեստի այլ ճյուղեր։ 1909 թ. Էրզրումում ավելի քան 1000 հոգի պարապում էին արհեստներով, «արհեստներ, որոնցից առանձնապես առաջ են գնացել դերձակությունը, կոշկակարությունը, ոսկերչությունը, դարբնությունը, պղնձագործությունը, հյուսնությունը, պայտառությունը, թիթեղագործությունը, ժամագործությունը։ չիլինգարությունը (երկաթագործություն—Ա. Հ.), զինագործությունը և այլն։ Ոսկերիչներն ունեն իրենց հատուկ շարքը, որտեղով անցնելիս, մարդու ուշադրությունն են գրավում գեղեցիկ ձեռագործ զարդարանքները։ Իսկ բոլորից ավելի առաջ է գնացել որմնադրությունը, որով հաց են գտնում բազմաթիվ հայ ընտանիքներ ոչ միայն քաղաքում, այլև Էրզրումի դաշտի շատ գյուղերում»[23]։

Հայ վարպետները շատ տեղերում իրենց արհեստները հասցնում էին կատարելության։ Նրանք, օրինակ, Էրզրումում պատրաստում էին հրաշալի կողպեքներ և ամենանուրբ կերպով փորագրում պողպատի վրա, իսկ Վանում շինում ոսկյա և արծաթյա այնպիսի իրեր, որոնք հիացմունք էին պատճառում դիտողներին։ Նրանք Մուշում պատրաստում էին ոսկեզօծ թելիկներով զարդարված գիմացկուն կճուճներ ու ջրամաններ, որոնք ջուրը միշտ սառն էին պահում, «մի տեսակ ֆիլտր էին, մաքրում էին ջրի անմաքրությունը»[24]։

---

20 Մ. Ճիզմեճյան, Խարբերդը և իր զավակները, 1955, էջ 87։

21 Տե՛ս Գ. Երևանյան, Ջարսանճակի հայոց պատմություն, Պեյրութ, 1956, էջ 228—231։

22 Վ. Փափազյան, Երկեր, հատ. 5, էջ 378։

23 Ա-Դո, Վանի Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1921, էջ 163։

24 «Մշակ», 1869, № 94։

Մետաղագործներից և բրուտագործներից ետ չէին մնում նաև կտավագործները, մետաքսագործներն ու գորգագործները։ Բիթլիսում նրանց պատրաստած կտավը «յուր նմանը չուներ և ոչ մեկ տեղ»[25]։ Իսկ Խարբերդի սանջակում պատրաստած գորգերը զարմացնում էին «թե ինչպես կհաջողեն այդչափ գեղեցիկ ու պատշաճավոր եղանակով իրարու հարմարեցնել բազմազան երանգներ, զորս իրենք կներկեն՝ գործածելով զուտ տեղական բույսեր և հանքեր»[26]։

Լինչը պատմում է, թե ինքը, լինելով Վանում, անջրանցիկ վերարկուի կարիք է զգացել և պատվիրել է տեղացի դերձակներին պատրաստել այն։ Եվ դերձակները մահուդից պատրաստել են այնպիսի հրաշալի անջրանցիկ վերարկու, որը կարող էր զարմացնել անգամ արևմտահնդկական դերձակին. «այդ ժամանակվանից սկսած,— գրում էր նա,— Վանի այդ անջրանցիկ վերարկուն դարձավ իմ ուղեկիցը»[27]։

Հայ վարպետներն իրենց շինվածքներով ու գործվածքներով մասնակցում էին համաշխարհային կամ ծայրամասային ցուցահանդեսներին և շահում մրցանակ։ Այսպես, 1867 թ. Փարիզում սրվազցի Ստեփան անունով մի արհեստավոր վիրաբուժական և գինեկոլոգիական նուրբ գործիքներ պատրաստելու համար արժանացավ պատվո վկայականի։ Նրա շինած գործիքները «ամենակատարյալը դատվեցան»[28]։

1880 թ. Կյուրինում մի հայ ջուլհակուհի հնարեց սարք, որով բրդյա գործվածքների վրա արտատպում էր եվրոպական կերպասների զարդերն ու ծաղիկները՝ դրանց բոլոր նրբություններով հանդերձ։ Ջուլհակուհու համբավը շուտով տարածվեց ամենուրեք, և նրա մոտ գնում էին սովորելու Մալաթիայից ու Սեբաստիայից, Մարաշից ու Կեսարիայից։ Ջուլհակուհու գյուտը հարկադրեց քուրդ աղաներին ու բեյերին մեղմ վարվել հայերի հետ, անգամ պատժել իրենց հովիվներին, եթե վերջիններս նեղություն էին պատճառում հայերին։ Աղաները մեծացնում էին իրենց ոչխարների հոտերը՝ հավատացած լինելով, որ այսուհետև «իրանց ապրանքը և նորան պահելու ու պահպանելու աշխատությունը զուր չի կորչի»[29]։

1910 թ. Թուրքական կառավարության կողմից կազմակերպված Վանի ցուցահանդեսում մրցանակ շահեցին մի խումբ հայ արհեստավորներ, որոնցից պետք է հիշատակել բրուտագործ և ատաղձագործ Ն. Դ. Գրիգորյանին և Ն. Պ. Շատախցյաններին, խոզանակագործ Մ. Սանաթագործյանին, շալագործ Ռ. Մարտիրոսյանին, գորգագործ Ս. Գոնտակչյանին և ուրիշների։

Բայց չնայած այդ զարգացման, XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբին արհեստների մի շարք ճյուղեր Արևմտյան Հայաստանում քայքայվում էին։ Դրանց քայքայումը պայմանավորված էր Թուրքիայի ու Արևմտյան Հայաստանի ներգրավումով համաշխարհային կապիտալիստական հորձանուտի մեջ։ Արևմտաեվրոպական պետություններն արտահանում էին դեպի Թուրքիա գերազանցապես արդյունաբերական ապրանքներ և ներմուծում այնտեղից գյուղատնտեսական ու անասնապահական մթերքներ։ Նրանց ար-

25 Գ. Սրվանձտյանց, Համով հոտով, էջ 106։
26 «Մասիս», 1893, ապրիլի 24, էջ 252—253։
27 Լինչ, նշված աշխատությունը, էջ 115։
28 «Բազմավեպ», 1882, էջ 298։
29 «Մշակ», 1881. մայիսի 8, № 82։

դյունաբերական ապրանքները Արևմտյան Հայաստանում սկսեցին արտամղել տեղական արհեստավորների ու մանր ապրանքաարտադրողների պատրաստած իրերը։ Այսպես. Բաղեշում «Շիլա ու չիթ կարմիր ու նախշուն կտավ ներկելու պարապմունքը ճշմարիտ որ նախանձելի շահաբերության մեջ կգտնվեր ու առուտուրի լայն ճյուղ մը բացեր էր երբեմն մեր հրապարակի վրա, բայց նորության և եվրոպական կյանքի արտադրությունները մեռցուցին արդեն այս արհեստը»[30]։ Վանում կտավագործությունը «անկում մը կրելու մեջ է, իր առաջադիմական մասնակի ճիգերուն հակառակ, ի շնորհս անիմաստ մրցակցության»[31]։ Ակնում «ոստայնանկության (ջուլհակություն—Ա. Հ.) հիմա բոլորովին ինկած է, հազիվ 1—200 տեսթեկեհներ կգործեն»[32] և այլն։

Արևմտյան Հայաստանում արհեստները քայքայվում էին նաև թուրքական կառավարության վարած հայաջինջ քաղաքականության հետևանքով։ Աբդուլ-Համիդը 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո սաստկացրեց հայկական հալածանքները, բազմաթիվ հայ արհեստավորներ ստիպված եղան թողնել հայրենի քաղաքները և արտագաղթել։ Դրա հետևանքով որոշ գյուղաքաղաքներ համարյա ամայացան։ Այսպես. Ա-Դոն գրում էր. «Նայելով Խլաթի գեղեցիկ դիրքին, երկու հնագույն շրջանների բերդերի մնացորդներին և կանդուն մնացած գեղեցկաշեն դամբարաններին, անժխտելի է մնում Խլաթի հարուստ անցյալը և ծաղկման փառավոր շրջանը, մինչդեռ նա այսօր անցյալի հուշերով ապրող մի խղճուկ պատկեր է ներկայացնում»[33]։

Արհեստավորներն Արևմտյան Հայաստանից արտագաղթում էին գլխավորապես Անդրկովկաս և մեծ զանգվածներով հաստատվում Ալեքսանդրապոլում, Թիֆլիսում, Ախալցխայում և Ախալքալաքում։

Արհեստավորների հետ միասին քայքայվում էին նաև էսնաֆական կարգերը։ Խ. Մարնակոզյանը արձանագրում էր, որ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո «...արհեստավորաց համայնական կազմակերպությունը սկսեց ավելի քայքայվել, լուծվել... այժմ հազվադեպ չէ տեսնել 4—5 տեսակ արհեստներ իմացող մի ուստայի, որ ձեռքը ծոցը դրած, շլինքը ծուռ, անհուսության կնիքը ճակատին՝ անգործ թափառում է փողոցում կամ 40—50 ռուբլի վարձով ծառա է մտած»[34]։

Իսկ 1891 թ. նա շարունակում էր. «...էսնաֆական նախկին կարգերից այժմ միայն թշվառ փշրանքներ են մնացել։ Նահապետական պարզությունը վերանում է, բարքերը խանգարվում են, ամեն ինչ տակն ու վրա է եղել»[35]։

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Արևմտյան Հայաստանի արհեստավորները սկսում են ենթարկվել նոր, ապրանքա-կապիտալիստական պայմաններին։ Նրանցից ոմանք մեկ մասնագիտության փոխարեն սովորում են մի քանիսը։ Նույն հեղինակը, հակադրելով էսնաֆական հին բարքերը նորերի հետ, գրում էր. «Այժմ երկաթագործ դարբինը շինում է ամեն տեսակ երկաթյա գործիքներ, հյուսնը շինում է ամեն տեսակ փայտյա առարկաներ, դերձակը կարում է ամեն տեսակ կար և այլն։ Իսկ էսնաֆական կարգերի ժամանակ՝ որևէ

30 «Մշակ», 1887, № 83։
31 «Բյուզանդիոն», 1905, օգոստոսի 18։
32 «Բյուզանդիոն», 1902, հունիսի 7։
33 Ա-Դ ո, նշված աշխատություններ, էջ 90։
34 «Մշակ», 1888, № 136։
35 «Մշակ», 1891, № 68։

արհեստի ստորաբաժանումները խնամքով ջոկված էին միմյանցից, թեև շատ անգամ սակավաթիվ լինելու պատճառով այդ ճյուղավորությունները ունենում էին մի ընդհանուր ուստաբաշի։ Խստիվ արգելված էր մեկին՝ մյուսի գործը կատարել. կլեկչին չէր կարող նույնիսկ կարկատան ձգել մի պղնձե ամանի, իսկ պղնձագործը իրավունք չուներ մի ման կլեկել։ Այդ կարգի դեմ զանցառու գտնվող վարպետը ենթարկվում էր պատժի»[36]։

Արհեստավորները դրա հետ միասին սկսում են դառնալ մանր ապրանքարտադրողներ, արտադրելով այժմ ոչ այնքան պատվիրատուի, որքան շուկայի համար։ Նրանք իրենց շինվածքները վաճառում էին տեղում, ինչպես և հեռավոր վայրերում, ուղարկելով ընդհուպ մինչև արտասահման։ Այսպես, 1902 թ. միայն 7000 հատ ծխատուփ է ուղարկված Վանից Կարին, Տրապիզոն, Պոլիս, Եգիպտոս, Եվրոպական և Ասիական Թուրքիայի զանազան քաղաքներ[37]։ «Վանի արհեստների մեջ,—գրում էր Մերուկը,—միայն ոսկերչությունն է, որ արտահանության նյութ է տալիս վանեցիներին և տարեկան իբրև դուտ շահ մոտ 3000 լիրա (25 000 ռուբլի) գումար է մտնում Վան»[38]։

Էրզրումում արհեստավորները պատրաստում էին պղնձյա զանազան առարկաներ և վաճառում 1 հոխան 34 զուրուշի կամ 3 ֆունտը՝ 2 ռուբլու[39]։

Ուշագրավ է, որ արհեստավորները, բացի քաղաքներից, դառնում էին մանր ապրանքարտադրողներ նաև գյուղերում. օրինակ, Վանի վիլայեթի Սխկա, Մխկեր, Հնդստան, Արտամետ, Բերդակ, Ջզրաշեն և այլն գյուղերի բնակիչները միայն կիրակի օրերին վաճառում էին Վանում 10 000 մեծ և 45 000 փոքր խսիրներ, իսկ Հայոց Ձորի, Հնդստանի և Առեք գյուղերի բնակիչները՝ օրական 15—20 եզան բեռ կողով, սալա, մաղրկա, կշեռք և նման ապրանքներ։ Արտամետցիք մի ձմեռվա ընթացքում վաճառում էին շուրջ 2000 աթոռ և ավելի քան 700 կտավագործության գործիք[40]։

Մի շարք գյուղերի բնակիչները համարյա ամբողջովին դարձել էին մանր ապրանքարտադրողներ։ Այդ տեսակետից պետք է նշել Էրզրումի վիլայեթի Կան, Օձնի, Կրեշք, Կեզում, Բիթլիսի վիլայեթի Վանիկ, Ղուլթիկ, Խասգյուղ, Մզրեն, Խարբերդի վիլայեթի Կռաչ, Էլամի, Դիլանզոր և այլ գյուղերի բնակիչների[41]։

Արևմտյան Հայաստանի քաղաքներում և գյուղերում հայ արհեստավորները գոյատևեցին մինչև առաջին համաշխարհային պատերազմը։ 1915 թ. երիտասարդ թուրքերը, կենսագործելով իրենց ոճրագործ քաղաքականությունը, հայ բնակչության մյուս զանգվածների հետ միասին, տեղահան արեցին ու կոտորեցին նաև հայ արհեստավորներին։ Նրանց մի մասին միայն հաջողվեց փախչել թուրքական յաթաղանից և անցնել արտասահման։

---

36 «Մշակ», 1891, № 65։

37 «Մուրճ», 1904, № 8, էջ 28։

38 Ա.-Դո, նշված աշխատությունը, էջ 90։

39 Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ, ֆ. «Գլխավոր արխիվ V—Ա.», 1880, գ. 1095, թ. 142։

40 Վ. Փափազյան, Երկեր, հատ. 5, էջ 473—474։

41 Տե՛ս Մ. Միրախորյան, Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի, Կ. Պոլիս, 1884, մ. 9., էջ 157—158, «Մասիս», 1882, մարտի 31, А. М. Колюбакин, Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции. Тифлис. 1891, т. III, ч. I. отд. 2-й, стр. 451.

А. С. Амбарян

РЕМЕСЛО ЗАПАДНОЙ АРМЕНИИ В ПОСЛЕДНЕЙ ЧЕТВЕРТИ XIX — НАЧАЛЕ XX ВВ.

Резюме

В последней четверти XIX — начале XX вв. ремесленное производство все еще продолжало занимать в городах Западной Армении господствующее положение.

Большинство ремесленников составляли армяне; изготовленные ими изделия, отличавшиеся изяществом, славились не только в Армении, но и далеко за ее пределами.

Часть ремесленников объединялась в эснафства, по своему характеру напоминавшие такие же ремесленные цехи, существовавшие в Закавказье и Восточной Армении. Эснафства имели свои традиции, которые веками соблюдались ремесленниками.

Но в рассматриваемый период эснафский строй и ремесленное производство претерпели некоторые изменения. В результате колониальной политики империалистических держав и дискриминационных мер турецкого правительства они стали приходить в упадок. Правда, в ряде мест ремесленники, приспособившись к новым условиям, превращались в мелких товаропроизводителей, но это не улучшало их положения.

Армянские ремесленники в Западной Армении существовали до депортации и истребления армянского населения младотурками